ընդ նոսա։ Եւ զկնքեալ թուղթն եդին յատենի, որ յէրէկն Դ իշխան գնացին[1]) ի խանն և ասացին. Կա՞յ այլ թուղթ աստի ի բաց, և Յակոբն ասէ՝ Չկայ։ Եւ կնքեցին զթուղթն, և կարդացին զթուղթն և գրեալ էր թէ Փիլիպպոս Հոգևորտէրն եդ զՅովանէս վարդապետն ձեզ առաջնորդ, և թէ չէք կամիր, զո՛ ոք որ կամիք, ասացէք զի առաքեցից, և կարծեմ՝ թէ Դ տարին ձեզ առաջնորդ մի լաւ է, որպէս և Փռանկք ունին զայս սահման։ Եւ ամենեքեան լուեալ՝ Բարի ասացին բանիս. եւ ասացին. Ահայ Դ տարի եղեւ, թո՛ղ ելնէ գնայ, և զո՛ ոք որ մեք կամիմք, կու գրեմք առ Հոգեւորտէրն։ Մերայինքս զայս ասէին, եւ այն կողմ ջանային հաստատել Մուղնեցուն եւ անկան յիրեարս։

Եւ առաւօտուս Գշի (29 Յունուար) դաս քաշէ Մուղնեցին զԵղիազարեանք յԱստուածածին և Էսիլի թոռ և չարքն մեր սկսին յայս կոյս և յայն կոյս մեծաբանել թէ Եղիազարեանք բանադրեցան ի կաթողիկոսէն. եւ ամենայն աւուրս կանխեալ կային զՄուղնեցաւ և փարէին Ղօզպէքճիսի Յակոբաւն։ Եւ ամբաստանութեամբ Մուղնեցոյն եւ վկայութեամբ չարկամաց ի թուղթն հաւատացեալ[2]) կաթողիկոսն եւ գրէ ոմանց Եղիազարեանց բանադրանս եւ հաստատութեան գիր առաջնորդութեան Մուղնեցոյն եւ առաքէ։ Եւ յորժամ մեր կողմի թուղթն հասանէ առ կաթողիկոսն՝ յափշութիւն առնէ գնայ եւ ասէ. Հա՛ս դու առաջ գնացողին եւ արգիլեա՛յ զթղթերս, որ գրեցաւ նախ։ Եւ մեր թղթատարն հասանի ի Թոխաթ եւ դարձուցանէ մինչ յԷջմիածին. ընդ առաջ ելանէ Յակոբս հանդերձ թղթիւս եւ զմեր թղթատարն լոկ դարձուցանէ, այլ գիր և պատասխանի առ Յակոբն մնայ, եւ

1) գնաց. 2) աւատացեալ.